



**Գենդերային պրակտիկաներից դեպի գենդերային  
քաղաքականություն. դեպքի մասնակցային  
հետազոտում հայաստանյան հանրային դպրոցական  
համայնքում**

*Հարություն Վերմիշյան  
Սոնա Բալասանյան*

© *Harutyun Vermishyan*  
© *Sona Balasanyan*  
© *Center for Gender and Leadership Studies*

*Սույն հրատարակությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:*

**ԵՐԵՎԱՆ 2015**

## Բովանդակություն

1. Անփոփազիր .....	2
2. Հետազոտության նպատակ .....	2
3. Հետազոտության մեթոդաբանություն .....	3
4. Գենդերային հավասարության սխեմա (ԳՀՍ) .....	3
5. Դպրոցի գենդերային հավասարության քաղաքականությունը .....	3
6. Եզրահանգումներ և առաջարկներ .....	8

1. Ամփոփագիր Նախագծի ողջ ընթացքում, դպրոցում աշխատելով, մենք փորձեցինք ցույց տալ, թե ինչպես է անդրադարձը գենդերային հիմնախնդիրներին խթանում դպրոցին՝ կրթական նպատակների իրագործման, աշակերտի կյանքը բարելավելու և ավելի բարձր կրթական չափանիշների ստեղծման հարցում: Ողջ ծրագիրը, որը հիմնված էր ուսուցչական անձնակազմի հետ անցկացված քննարկումների վրա,

միտված էր խորհրդատվության և գենդերային ազդեցության գնահատման միջոցով գենդերային հավասարության սխեմայի զարգացմանը և գենդերային քաղաքականության մշակմանը:

2. Հետազոտության նպատակ Նախագծի հիմնական նպատակն էր մասնակցային մեթոդաբանությամբ

ստեղծել գենդերային քաղաքականության նախագիծ: Վերջինս կարտացույց և ցույց կտար դպրոցական առօրյայում դրսևորվող գենդերային վարքագիծը՝ օգնելով դպրոցին հաղթահարելու գենդերային հիմնախնդիրները:

Հետազոտությունն անցկացվել է հետազոտական նախագծի շրջանակներում՝ կենտրոնանալով մեկ դպրոցի դեպքի վրա: Հետազոտական աշխատանքներն իրականացվել են դպրոցական համայնքի անդամների հետ

(տնօրեն, ուսմասվար և ուսուցիչներ) մասնակցային միջավայրում: Դպրոցի ուսուցչական և վարչական անձնակազմը ուղղակիորեն ներգրավված է եղել դպրոցի գենդերային քաղաքականության նախագծման գործընթացում, որն էլ իրենից ենթադրում էր.

- Դպրոցի գենդերային միջավայրի վերհանում (գենդերային վիճակագրություն, ուսուցչական կազմի ինքնադրսևրում, դպրոցականների գենդերային սոցիալականացման նախապայմաններ):
- Ուսումնական ծրագրի բովանդակության փորձաքննություն՝ ուսուցչական անձնակազմի գենդերային դիրքորոշումների և կարծրատիպերի հետ համադրմամբ:
- Գենդերային հավասարության սխեմայի (ԳՀՍ) ստեղծում:
- Գենդերային քաղաքականության նախագծում:

3. Հետազոտության մեթոդաբանություն Երևանյան հանրային դպրոցի մասնակցային ուսումնասիրության

մեթոդաբանությունը ենթադրում է դեպքի ուսումնասիրության մոդել, որը հնարավորություն է տալիս համատեղ աշխատել ուսուցչական, ադմինիստրատիվ աշխատակազմի և աշակերտների հետ՝ հաշվի առնելով դպրոցի գենդերային միջավայրը: Հետազոտությունը ենթադրում էր.

- Ընթացիկ հետազոտության պլանավորում և տվյալների հավաքագրում:
- Տվյալների վերլուծություն, գենդերային հավասարության սխեմայի ստեղծում և գենդերային քաղաքականության նախագծում:

4. Գենդերային հավասարության սխեմա (ԳՀՍ)

Հետազոտական խմբի կողմից խմբագրված գենդերային հավասարության սխեման (մանրամասն տե՛ս ամբողջական հաշվետվության անգլերեն տարբերակում) ամփոփում է

1. *դպրոցում գենդերային հավասարության ապահովման և գենդերային խտրականության բացառման տեսլականը և արժեքները;*
2. *դպրոցական այլ քաղաքականությունների մշակման գործընթացում գենդերային քաղաքականության դրույթների արժևորման սկզբունքները;*
3. *գենդերային հավասարության սխեմայի նպատակները;*
4. *գենդերային հավասարության ապահովման և գենդերային խտրականության բացառման գործընթացի հիմնական պարտասխանատուների ցանկը;*
5. *ուսանման և ուսուցանման գործընթացում գենդերային հավասարության ապահովման և գենդերային խտրականության բացառման ընթացակարգերը;*
6. *ուսումնական պլանի ձևավորման սկզբունքները;*
7. *դպրոցի գենդերային էթոսը;*
8. *ծնողների և խնամակալների հետ համագործակցության սկզբունքները:*

5. Դպրոցի գենդերային հավասարության քաղաքականությունը Ստորև ներկայացված է դպրոցի գենդերային քաղաքականության բովանդակությունը:

## *Նախաբան*

- Մեր դպրոցում մենք պատրաստ ենք ապահովել կրթական գործունեության հավասար հնարավորություն ` աշխատակազմի, աշակերտների և բոլոր այն մարդկանց համար, ովքեր ներգրավված են դպրոցական համայնքում` անկախ սեռից: Բոլոր աշակերտների և ուսանողների ձեռքբերումները պետք է վերահսկվեն գենդերային հավասարության ակզբունքների հիման վրա, և մենք պետք է օգտագործենք այս տվյալները կրթության որակի չափանիշները բարձրացնելու և համընդգրկուն ուսուցում ապահովելու համար:
- Մենք նպատակ ունենք ամուր հիմքեր ստեղծել մեր աշակերտների սոցիալական կյանքի համար, ինչը թույլ կտա նրանց ամբողջացնել իրենց ներուժը` անկախ գենդերային կարծրատիպերից:
- Մենք կապահովենք գենդերային հավասարությունը և կորսնորենք անաչառություն` կատարելով մեր պարտականությունները որպես գործատու:
- Մենք հավատում ենք, որ դպրոցական հավասարակշռված գենդերային միջավայրը և գենդերային ուսուցումը և ուսանումը ուժ է, որը պետք է հաշվի առնել և ուշադրության արժանացնել ուսուցիչների և աշակերտների շրջանում:
- Այս քաղաքականությունն ուրվագծում է, թե ինչպես ենք մենք ունակ խթանել գենդերային հավասարությունը մեր դպրոցում և ձեռնամուխ լինել մեր գերակայությունների գործողության պլանի իրականացմանը առաջիկա 3 տարիների ընթացքում:

## *Սոցիալական համատեքստ*

- Մենք հասկանում ենք, որ գենդերային հիմախնդիրները տարածված են ողջ երկրով մեկ, նույնիսկ «գենդեր» եզրույթի հետ կապված, բայց մենք կնպաստենք սոցիալապես կարևոր դեր ստանձնած գենդերային անաչառության տարածմանը և կընդգծենք այն կոնկրետ խնդիրների համատեքստում, որոնց հաճախ կարելի է հանդիպել:
- Մենք դեռ շատ անելիքներ ունենք, որպեսզի հասարակության մեջ սեռերի հավասարության շուրջ ձևավորված կարծրատիպերը վերափոխվեն.

կարծրատիպերը պետք է հասկացվեն աշակերտների, ընդգրկուն դպրոցական համայնքների, ծնողների և հետազոտողների հետ համագործակցման համատեքստում՝ պահպանելով կապերը նրանց հետ՝ համոզվելով, որ դպրոցը գործել է համապատասխան քաղաքականության և գենդերային հավասարության սխեմայի՝ զարգացնելով վերջինս:

### *Ընդհանուր պարտականություններ*

- Համաձայն մեր դպրոցի արժեքների, մենք ողջունում ենք օրինականացված գենդերային հավասարության սխեման, համաձայն որի մենք
  - ✓ վերացնում ենք գենդերի հետ կապված հիմնահարցերը դպրոցական համայնքի ներկայացուցիչների փոխհարաբերություններում:
  - ✓ վերացնում ենք սեռի պատկանելությամբ և սոցիալ-տնտեսական կարգավիճակով փոխադասանավորված աշակերտների շրջանում առկա խտրականությունը:
  - ✓ խթանում ենք գենդերային հավասարությունը:
- Ոչ մի աշակերտ չպետք է արժանանա վատ վերաբերմունքի իր սեռային պատկանելության պատճառով: Գենդերային պատկանելությամբ պայմանավորված որևէ ոտձգություն, որը տհաճ է, սպառնում է, վիրավորում կամ նվաստացնում է որևէ մեկի ինքնագնահատականը, գենդերային հիմնախնդիրների նկատմամբ անառողջ մոտեցման արդյունք է:
- Մենք վերաբերում ենք «գենդերին» որպես լայն հասարակական դերերի և պարտականությունների համար որոշիչ դեր կատարող երևույթի, որը կառուցում է մեր կյանքը: Համաձայն գենդերային հավասարության սկզբունքի մեր նպատակն է ճանաչել և օգնել հաղթահարելու այն երկարատև խոչընդոտները, որոնք առաջանում են սոցիալապես վերագրվող գենդերային կարծրատիպերից և նախապաշարմունքներից:
- Հասկանալի է, որ որոշ հանգամանքներում կարող է նպատակահարմար լինել աղջիկներին ու տղաներին, կանանց և տղամարդկանց վերաբերվել տարբեր կերպ, եթե այդ ամենը ուղղված է հաղթահարելու նախորդ, ընթացիկ կամ հնարավոր ապագա հիմնահարցեր:

- Եթե որևէ դեպքում, որևէ գենդերային հիմնահարց անորոշ է մնում, մենք կփորձենք նախապատվությունը տալ մասնագետի խորհուրդին:

*Հատուկ պարտականություններ*

Որպեսզի ստանձնենք կոնրետ պարտականություններ, մենք նպատակադրվել ենք իրականացնելու գենդերային հավասարության գործողությունների ծրագիրը, որն ամփոփում է մեր ընթացիկ նպատակները: Սա կազմում է այս քաղաքականության էական մասը.

- Որպեսզի իրականացվի գործողությունների ծրագիրը, մենք՝
  - ✓ Հավաքել և վերլուծել ենք դպրոցական տվյալներ և գենդերային հավասարության մասին համապատասխան գրականություն, այդ թվում մեր համայնքի և հասարակության մասին տվյալներ:
  - ✓ Խորհրդակցել ենք բոլոր աշխատակիցների, աշակերտների, ծնողների և համապատասխան տեղական համայնքների անդամների հետ:
  - ✓ Վերանայել ենք այլ դպրոցական քաղաքականություններ և պրակտիկաններ, որպեսզի գնահատենք հիմնախնդիրների հաղթահարման առկա ուղիները:
  - ✓ Հնարավորինս կարողացել ենք ազդեցություն ունենալ գենդերային հավասարության հաստատման վրա:
  - ✓ Վստահ ենք, որ դպրոցական համայնքը հաշվետու է այս ամենի համար և հասկանում է իր առջև դրված գենդերային խտրականության կանխարգելման և գենդերային հավասարության խթանման պարտականությունները:
  - ✓ Հրատարակում և իրականացնում ենք գործողությունների ծրագիրը մեր նպատակների և գործողությունների իրականացմանը զուգահեռ:
- Մենք պետք է.
  - ✓ Հաշվետվություն ներկայացնենք առաջընթացի վերաբերյալ և սահմանենք հետագա նպատակները, եթե անհրաժեշտ է:
  - ✓ Վերանայենք և համեմատենք քաղաքականության և գործողությունների ծրագիրն առնվազն երկու տարին մեկ:

*Տղաների և աղջիկների նկատմամբ տարբերակված մոտեցում (անհրաժեշտության դեպքում)*

- Այն դեպքերում, երբ մենք տարբերակված մոտեցում ենք ցուցաբերում տղաներին և աղջիկներին, կանանց և տղամարդկանց, ովքեր ընդգրկված են դպրոցական համայնքում, մենք տեսնում են նման մոտեցման անհրաժեշտությունը, որի պատճառը պատմական և ներկայիս կարծրատիպացված և անարդար գենդերային խտրականության ենթատեքստից սկիզբ առած խնդիրներին առանձնահատուկ մոտեցում ցուցաբերելու մեջ է:
- Մենք տարբերակված մոտեցում են ցուցաբերում նաև այն դեպքերում, երբ խնդիրները նեղ անձնական են և նուրբ:
- Մենք տարբերակված կրթություն, կամ այլ ծառայություններ չեն տրամադրում, ինչը կարող է անդադառնալ որևէ սեռին արտոնություններ տալու պատճառ, կամ կխորացնի գենդերային կարծրատիպացված և անհավասար մթնոլորտը:
- Մենք տղաներին և աղջիկներին, տղամարդկանց և կանանց ընձեռում են միևնույն հնարավորությունները: Տարբերակված մոտեցում ցուցաբերելու պարագայում մենք ապահովում ենք համարժեք վերաբերմունքը, հնարավորությունները և ծառայությունները մյուս սեռի նկատմամբ:
- Մենք տարբերակում չենք դնում կրթական ծրագրի մատուցման հարցում, և, եթե կա տարբերակման անհրաժեշտություն, մենք ուշադրություն ենք դարձնում կարծրատիպային մտածողությունից հեռու մնալու մեր մոտեցմանը:
- Եթե մենք աշակերտներից, համայնքից, կամ ծնողներից ստանաք տարբերակված մոտեցում ցուցաբերելու և գենդերային անհավասարությունը որոշ դեպքերում ընդունելու առաջարկներ, նման առաջարկները կքննարկվեն մեր կողմից:

*Գենդերային հավասարության քաղաքականության բացթողումները*

- Մենք հասկանում ենք, որ գենդերային խտրականության և ոտնձգությունների վերացումն ու գենդերային հավասարության խթանումը



կրթական գործառույթի մասն է կազմում, սակայն սա նաև մշակութային փոփոխության խնդիր է:

- Այս քաղաքականությունը կարող է նպաստել կրթական բարեփոխմանը և իրականացվել դպրոցում:
- Քաղաքականությունը հասանելի կլինի էլեկտրոնային փոստով կամ ընդլայնված տպագիր տարբերակով՝ հաշվի առնելով դպրոցի սկզբունքը:

## 6. Եզրահանգումներ և առաջարկներ

### *Առաջնորդություն, կազմակերպում և կառավարում*

- Հստակ և ճշգրիտ մոնիտորինգի իրականացման պարագայում այս քաղաքականությունը և նրան հարակից ընթացակարգերն ու ռազմավարությունները, նոր քաղաքականությունների ստեղծումն ու, ընդհանուր առմամբ, դպրոցի կառավարման ենթակառուցվածքների գործառնման արդյունավետության բարձրացումը էական են դպրոցական գործելակերպի բարելավման համար:
- Գենդերային քաղաքականությամբ ենթադրվող պարտականությունների իրականացումը կամբողջացնի այն համոզմունքը, որ քաղաքականությունը հաջողությամբ իրագործված է, և բոլորը, ովքեր աշխատում են դպրոցում, հասկանում են, որ պետք է համապատասխան աջակցություն ցուցաբերեն հիմնախնդիրների հաղթահարման հարցում:
- Դպրոցում քաղաքականության հաջող իրականացումը կարող է լավ օրինակ լինել այն բանի, թե ինչպես կարող են դպրոցներն ինքնուրույն ստեղծել և վարել քաղաքականություն: Տեղեկատվության հետագա տարածումը և փորձի փոխանակումը ցանկալի են:
- Դպրոցի ուսուցչական կազմի ինքնառեֆլեքսիան ներկայումս հիմնական և շատ կարևոր օրինակ կարող է լինել գենդերային կողմնակալության և կարծրատիպերի հաղթահարման համար, ինչպես դասարանի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Կարևոր է, թե ինչն ենք առօրյայում համարում «նորմալ»: Օրինակ՝ կան որոշ նախապաշարմունքներ, ինչպիսիք են աղջիկների ավելի վաղ հասունացումը, մտավոր ունակությունների գենետիկ հիմքերը, որոնք աշակերտներին ի սկզբանե դնում են անհավասար

վիճակի մեջ, որի հաղթահարման հարցում կարևորվում է պետական քաղաքականության և ոչ հենց դպրոցի վարած քաղաքականության դերը:

- Ուսուցիչները որոշիչ դեր ունեն գենդերային հավասարության խթանման գործընթացում: Գենդերային քաղաքականության արդյունավետությունը որոշվում է նրանով, թե որքանով են տղաներին և աղջիկներին իրենց ներուժը ամբողջությամբ օգտագործելու հնարավորությունները խրախուսվում, աջակցվում, ինչքանով են հենց նրանք համոզված, որ տղաներն ու աղջիկները ունեն լիարժեք և հավասար դիրք ուսումնական ծրագրերի նկատմամբ և ինչքանով է գենդերային հավասարությունը խթանվում ուսուցման, ուսումնական ծրագրերի և հոգատարության միջոցով: Դպրոցների տնօրենների, դպրոցական համայնքների, ծնողների, հետազոտողների ներդրումները այս գործընթացին շատ կարևոր են:
- Քաղաքականությունը ներդնելիս կարևոր են ռազմավարական ծրագրերի նախագծումը, հավասարությանը միտված պրակտիկաների կիրառումը և գենդերային հավասարության քաղաքականության գործարկման համար այլ քայլերի իրագործումը:

*Դպրոցի գենդերային հավասարության ապահովման պատրաստակամությունը*

- Դպրոցը կարիք ունի ամբողջացնելու գենդերային հավասարության հանդեպ իր նվիրվածությունը՝ դպրոցական համայնքի բոլոր ներկայացուցիչների միջև անկախ սեռից փոխադարձ վստահության և հարգանքի մթնոլորտի ձևավորմամբ, գենդերային կարծրատիպերի մերժմամբ և սեռային խտրականության նվազման և ձեռքբերումների խթանմանը ձգտելու ուսուցմամբ:

*Կրթական ծրագրեր/ուսուցանել և ուսանել*

- Դպրոցը չի կարող դիտվել որպես խնդրի լուծման պասիվ կողմ: Ուսուցիչները պետք է խրախուսվեն՝ քննադատելով և ապահովելով առողջ լուծումներ դասագրքերում/օժանդակ նյութերում առկա բացթողումների ու վրիպումների վերաբերյալ:

- Հրավիրելով տղամարդ դասախոսների/հյուրերի, ովքեր դաս կվարեն կարելի է օգնել կոտրել կանանց որպես ուսուցիչների վերաբերյալ աշակերտների շրջանում առկա կարծրատիպը:
- Դպրոց հրավիրել և՛ արական, և՛ իգական սեռի երիտասարդների՝ ցույց տալով նրանց փաստացի հաջողված պատմություններ, այդ քայլով իսկ նպաստելով աշակերտների ուսմանը:

*Նվաճումներ/ձեռքբերումներ/Գնահատում/Առաջընթաց*

- Բարձր առաջադիմություն պետք է ակնկալել բոլոր աշակերտներից՝ հաշվի առնելով տղաների ցածր առաջադիմության հիմախնդիրը:

*Հաճախելիություն*

- Դպրոցը պետք է վերահսկել և տղաների և աղջիկների հաճախումների տեսանկյունից և օգտագործել տվյալները քիչ հաճախելության դեմ ռազմավարություններ զարգացնելու համար:

*Վարքագիծ*

- Անհրաժեշտ գրականություն վերանայում, այլ դասախոսների հրավիրում, ովքեր ուսուցիչների մոտ կխոսեն գենդերային վարքագծի առանձնահատկություններից:
- Ուսուցչական անձնակազմը պետք է խրախուսի հետազոտական հմտություններ ձեռք բերելու և աշակերտների վարքի դիտարկման հմտություններ ձեռք բերելու հարցում: Ժամանակ առ ժամանակ, իրական կարիքից դրդված գիտափորձերը կարող են լավագույն միջոց հանդիսանալ հիմնախնդիրների լուծումները հասկանալու ճանապարհին:

*Համայնք/Ծնողական խորհրդատվություն*

- Դպրոցը կարող է լինել շատ կարևոր գործակալ գենդերային հավասարությունը խթանելու հարցում՝ մի կողմից համագործակցելով ծնողների / խնամակալների և լայն հանրության հետ՝ զարգացնելով դրական վերաբերմունքը գենդերային հարցերի վերաբերյալ:

*Ոչ թե քննադատություն, այլ գործողություններ. մոտեցման վերանայում*

Դպրոցները և ուսուցիչները հոգնել են քննադատված լինելուց, չնայած այն հանգամանքին, որ նրանք իրականացնում են շատ ծանր աշխատանք՝ փոխարենը

վարձատրվելով չնչին աշխատավարձով: Այս առաջարկությունն ուղղված է հետազոտական համայնքին, որի ներկայությունը դպրոցում՝ մասնակցային և գործողության վրա հիմնված հետազոտությունների շրջանակներում, հայկական կրթական միջավայրում շատ անհրաժեշտ է, ինչպես կարելի է տեսնել մեր իրականացրած մեկ մասնակցային դեպքի ուսումնասիրության օրինակով:

Ամփոփելով նախագծի շրջանակներում իրականացված հետազոտության արդյունքները՝ կարող ենք նշել.

- Դպրոցը փորձի պակաս ուներ արտադասարական և արտածրագրային հիմնախնդիրների հետ աշխատելու հարցում, բայց միևնույն ժամանակ այն «բաց» էր փոփոխությունների նկատմամբ և աջակցության կարիք ուներ:
- ուսուցիչները չունեին հետազոտական հմտությունները, բայց նրանք դրսևորում էին և շարունակում են դրսևորել սովորելու ցանկություն:
- ուսուցիչները հատուկ չէին առանջնացնում գենդերային հիմնախնդիրները, բայց որքան շատ էին նրանք վերլուծում հիմնախնդիրները այնքան ավելի պարզ էին դառնում (և մեր, և ուսուցիչների համար) առանցքային գենդերային հիմնահարցերը:

Նախագիծը առաջիններից էր հայ հանրակրթական դպրոցներում և ներկայումս դպրոցն ունի վերջնական գենդերային հավասարության քաղաքականություն, ինչպես նաև ծրագրի շրջանակներում դպրոցական համայնքն ինքն իրեն տեսավ որպես քաղաքականության կարևոր սուբյեկտ/կողմ: Հետևաբար, ծրագիրը իրականացվեց հայաստանյան հանրակրթական ոլորտում գենդերային հիմնախնդրի նկատմամբ նոր (ներքևից-վերև) մասնակցային մոտեցմամբ, որն ունի մի շարք առավելություններ՝ խթանել փոքրամասշտաբ, բայց իրական փոփոխություններ: